



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ
*N4(78) հունիսի 21 – օգոստոսի 20***

10 սեպտեմբերի 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ.....	3
1.1 ՀՀ օրենքներ.....	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ	3
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ.....	5
2.1 Այնպիսի գանգառարկումների և ծառայողական քննությունների	11
2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ.....	12
2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ.....	13

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1.1 ՀՀ օրենքներ

Փաստաթուղթ	«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
Ամսաթիվը և համարը	29.06.2015թ., N ՀՕ-67-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 39 (1128), 30.06.2015թ.
Ուժի մեջ է	01.07.2015թ.

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմանը համաձայն սահմանվել է, որ **առևտրի իրականացման վայրերում** (ոսկու շուկաներ) վաճառատեղանների կամ վաճառակետերի միջոցով **թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի առքուվաճառքի գործունեություն իրականացնողները**՝ տարեկան մինչև 115 մլն դրամ իրացման շրջանառությամբ, որոնք, օրենքի համաձայն, համարվում են շրջանառության հարկ վճարողներ, սույն օրենքի 8-րդ հավելվածով սահմանված հայտարարարություն ներկայացնելու դեպքում համապատասխան գործունեության մասով **համարվում են արտոնագրային վճար վճարողներ**:

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	10.06.2015թ., N 620-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 36 (1125), 24.06.2015թ.
Ուժի մեջ է	25.06.2015թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է **անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝** պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից **պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգը:**

Փաստաթուղթ	«ՀՀ-ում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափանիշներին ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ ծանուցման ձևը սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 20-ի N 502-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30.07.2015թ., N 865-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 50 (1136), 12.08.2015թ.
Ուժի մեջ է	13.08.2015թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է՝

1. Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները,
2. ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ ծանուցման ձևը:

Փաստաթուղթ	«Մասնագիտացված, տարածաշրջանային մաքսատներ և մաքսային կետեր ստեղծելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	06.08.2015թ., N 886-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 51 (1140), 19.08.2015թ.
Ուժի մեջ է	20.08.2015թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ստեղծվել է ՀՀ ֆինանսների նախարարության հետևյալ մասնագիտացված, տարածաշրջանային մաքսատները և մաքսային կետերը՝

1) ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատուն,

2) ակցիզային հարկով հարկվող ապրանքների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատուն,

3) միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների մասնագիտացված մաքսատուն,

4) «Զվարթնոց» տարածաշրջանային մաքսատուն,

5) Արարատյան տարածաշրջանային մաքսատուն,

6) Միջազգային ճանապարհային փոխադրումների տարածաշրջանային մաքսատուն,

7) Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն՝

ա. Մեղրիի մաքսային կետ,

8) Գուգարքի տարածաշրջանային մաքսատուն՝

ա. Բագրատաշենի մաքսային կետ,

բ. Այրում-Ջիլիզայի մաքսային կետ,

գ. Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետ,

9) Շիրակի տարածաշրջանային մաքսատուն՝

ա. Բավրայի մաքսային կետ,

բ. «Շիրակ» օդանավակայանի մաքսային կետ:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրերի ձևերը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	05.06.2015թ., թիվ 357-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր №18 (530) ¹ , 01.07.2015թ.
Ուժի մեջ է	10.07.2015թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվել են.

1. ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրի (ՄԱՀ 1) ձևը.
2. ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրի (ՄԱՀ 2) ձևը:

Փաստաթուղթ	«Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշման ձևը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	08.06.2015թ., թիվ 369-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր №17 (529), 22.06.2015թ.
Ուժի մեջ է	02.07.2015թ.

Համառոտ նկարագիր

Մաքսային միության հանձնաժողովի 20.09.2010թ. «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշման ձևը հաստատելու մասին» թիվ 376 որոշման դրույթներին համապատասխան՝ հրամանով հաստատվել է ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշման ձևը:

Փաստաթուղթ	«ԵՏՄ անդամ պետություններ ապրանքների արտահանման գործարքների հարկման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	15.06.2015թ., թիվ 8
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր №17 (529), 22.06.2015թ.
Ուժի մեջ է	15.06.2015թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ սահմանվել են.

1. Եթե ապրանքների իրացման գործարքները «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն **ազատված են ԱԱՀ-ից և արտահանվում են ԵՏՄ անդամ պետություններ**, հարկային մարմին **արտահանման հարկային հայտարարագիրը** և ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած **հայտարարությունները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում ԱԱՀ չի առաջադրվում:**

2. **Շրջանառության հարկ վճարողների կողմից** ԵՏՄ անդամ պետություններ ապրանքների արտահանման գործարքների մասով **արտահանման հարկային հայտարարագիրը** և ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած **հայտարարությունները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում ԱԱՀ չի առաջադրվում**, քանի որ շրջանառության հարկ վճարողների համար ԵՏՄ անդամ պետություններ արտահանված ապրանքների մասով հաշվարկվում է շրջանառության հարկ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափով

3. **Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտների կողմից** ընտանեկան ձեռնարկատիրության մասով **ԵՏՄ անդամ պետություններ ապրանքների արտահանման** գործարքի համար **հարկային պարտավորություններ չեն առաջանում:**

Փաստաթուղթ	«Աշխատողներին հաշվարկվող պարգևատրման գումարների հարկման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	15.06.2015թ., թիվ 9
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր №17 (529), 22.06.2015թ.
Ուժի մեջ է	15.06.2015թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ սահմանվել է.

Եթե ընթացիկ ամսում գործատուի կողմից ընդունված իրավական ակտով հաշվարկվում են այդ ամսվան **նախորդող ժամանակահատվածներում** աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության համար **պարգևատրման գումարներ**, ապա այդ գումարներից եկամտային հարկ

հաշվարկվում է հաշվի առնելով **ընթացիկ ամսվա աշխատավարձի գումարը՝ միասնականացված կարգով, և արտացոլվում է այդ (ընթացիկ) ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկում:**

Փաստաթուղթ	«Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական վճարի հաշվարկման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	15.06.2015թ., թիվ 10
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր №17 (529), 22.06.2015թ.
Ուժի մեջ է	15.06.2015թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ սահմանվել է.

1. **ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական վճարը հաշվարկվում է այդ ապրանքների համար «ՀՀ և ԵՏՄ անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազայի** (առանց այդ ապրանքների համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարի) **հիման վրա** (վճարի հաշվարկման բազա), **ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված բնապահպանական վճարների դրույքաչափերին համապատասխան:**

2. Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ **ներմուծող իրացնողների կողմից ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված** և հաշվետու ժամանակաշրջանում իրացվող ապրանքների իրացման շրջանառության հիման վրա **հաշվարկված բնապահպանական վճարը պակասեցվում է** այդ ապրանքների համար վճարի հաշվարկման բազայի հիման վրա հաշվարկված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարի չափով՝ հաշվետու ժամանակաշրջանում **իրացված ապրանքներին համամասնորեն, բայց ոչ ավելի, քան հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված վճարի գումարից:**

3. Այն դեպքում, երբ **ՀՀ-ում արտադրվող և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրությունում անմիջականորեն օգտագործվել են ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ,** ապա արտադրող իրացնողի կողմից հաշվետու ժամանակաշրջանում

ապրանքների իրացման շրջանառության հիման վրա **հաշվարկված բնապահպանական վճարը պակասեցվում է** իրացված ապրանքների արտադրությունում օգտագործված՝ **ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված** ապրանքների համար հաշվարկված և պետական բյուջե վճարված **բնապահպանական վճարի չափով, բայց ոչ ավելի, քան իրացված ապրանքների համար հաշվարկված բնապահպանական վճարի գումարից:**

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի հունիսի 7-ի N 417-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	05.06.2015թ., թիվ 358-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 18 (530) ¹ , 01.07.2015թ.
Ուժի մեջ է	11.07.2015թ.

Համառոտ նկարագիր

Կատարվել են փոփոխություններ «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ (պարզեցված), տարեկան եկամուտների մասին (պարզեցված) հաշվարկների ձևերում և դրանց լրացման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 7-ի N 175-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի N 417-Ն հրամանում, մասնավորապես **տարեկան եկամուտների մասին (պարզեցված) հաշվարկը լրացվել է նոր 3.1-րդ տողով**, որը վերաբերում է՝ որպես ֆիզիկական անձ, բոլոր աղբյուրներից (այդ թվում՝ հարկային գործակալներից) անշարժ գույքի վարձակալությունից ստացված վարձակալական վճարների 58,35 մլն.դրամը գերազանցող գումարին և այդ գումարից 10% դրույքաչափով եկամտային հարկ հաշվարկելու պարտավորությանը:

Փաստաթուղթ	«ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2012 թվականի հունիսի 26-ի N197-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	19.07.2015թ., N 418-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 19 (531).1, 22.07.2015թ.
Ուժի մեջ է	01.08.2015թ.

Համառոտ նկարագիր

Հրամանում կատարված փոփոխությամբ, մասնավորապես, վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի ձևի «մասնագիտություններ» ենթաբաժնի ծածկագրի լրացման կարգում հղում է կատարվել նաև ՀՀ կառավարության 23.10.15թ. «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1191-Ն որոշմանը, որը կիրառվելու է 2015թ. նոյեմբերի 1-ից:

Փաստաթուղթ	«ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N639-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	08.07.2015թ., N 461-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 20(532), 03.08.2015թ.
Ուժի մեջ է	13.08.2015թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Շրջանառության հարկ վճարողին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ հայտարարագրի ձևը, հայտարարագրի ներկայացման և հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ տվյալների մուտքագրման կարգը հաստատելու մասին» N 639-Ն հրամանը:

Փաստաթուղթ	«ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2013 թվականի հունվարի 23-ի N 25-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	08.07.2015թ., N 460-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 20(532), 03.08.2015թ.
Ուժի մեջ է	13.08.2015թ.

Համառոտ նկարագիր

Հաշվի առնելով «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները (ՀՕ-38-Ն)՝ համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013թ. հունվարի 23-ի «Շրջանառության հարկի հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» N 25-Ն հրամանում: Հարկ է հաշվի առնել, որ

նշված փոփոխությունները տարածվում են 2015թ. 3-րդ եռամսյակից սկսած հաշվետու ժամանակաշրջանների վրա:

Փաստաթուղթ	«ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2013 թվականի մարտի 1-ի N 72-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	08.07.2015թ., N 462-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 20(532), 03.08.2015թ.
Ուժի մեջ է	13.08.2015թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013թ. մարտի 1-ի «Երրորդ անձանցից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա անձանց փոխկապակցված ճանաչելու կարգը սահմանելու մասին» N 72-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 7-րդ կետում, համաձայն որի սահմանվել է, որ փոխկապակցված անձինք դադարում են համարվել շրջանառության հարկ վճարողներ (համարվում են ավելացված արժեքի հարկ վճարողներ)՝

1) որոշումը հարկ վճարողի կողմից ստանալու օրվանից, եթե այդ անձանց ընդհանուր իրացման շրջանառությունը գերազանցում է 115.0 մլն դրամը,

2) ընդհանուր իրացման շրջանառությունը 115.0 մլն դրամը գերազանցելու պահից, եթե անձանց փոխկապակցված համարելու որոշումը ստանալու պահին փոխկապակցված անձանց ընդհանուր իրացման շրջանառությունը պակաս է 115.0 մլն դրամից:

2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

2015 թ-ի հունիսի 20-ից մինչև 2015 թ-ի օգոստոսի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 61 որոշում, որից բավարարվել է 33, բավարարվել է մասնակի 6, մերժվել է 19, կասեցվել է 2, կարճվել է 1:

2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	Հաշվետու տարի 2015		
			Հուլիս	Հունվար-Հուլիս	Աճի տեմպ %
1	ՀՀ ՖՆ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	մլն դրամ	91,549.7	592,071.0	111.8
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում	մլն դրամ	88,748.4	574,175.4	100.1
1.1.1	ԱԱՀ, այդ թվում	մլն դրամ	37,045.0	229,686.6	94.1
1.1.1.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	4,086.2	21,367.5	-
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	6,522.4	66,260.3	96.2
1.1.3	Եկամտային հարկ	մլն դրամ	28,104.1	175,828.0	105.6
1.1.4	Ակցիզային հարկ, այդ թվում	մլն դրամ	4,833.8	25,878.1	99.1
1.1.4.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	398.0	1,801.9	-
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	1,323.3	6,493.7	69.6
1.1.6	Արտոնագրային վճար	մլն դրամ	558.6	3,860.4	98.6
1.1.7	Հաստատագրված վճար	մլն դրամ	215.0	1,796.2	50.4
1.1.8	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	մլն դրամ	1,505.9	14,712.9	94.3
1.1.9	Մաքսատուրք, այդ թվում	մլն դրամ	5,779.3	36,135.1	127.9
1.1.9.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	մլն դրամ	5,357.2	29,877.8	-
1.1.10	Նպատակային սոցիալական վճար	մլն դրամ	927.1	5,851.9	-
1.1.11	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	1,934.0	7,672.2	104.8
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,801.2	17,895.5	93.8

2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2015թ. հուլիս
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1735
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1375
1.2	Իրավաբանական անձ	հատ	360
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	140
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	4,494.5
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2015թ. հունվար-հուլիս 9689
5.1	Բավարարված	հատ	420
5.2	Մերժված	հատ	12
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	5366
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլրդ դրամ	8.312
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	17918
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	326,5
8	Հարկ վճարողների գույքի վրա	հատ	1559

	դրված արգելադրումների թիվ		
8.1	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլրդ դրամ	4.286
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	97
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1,120
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	559
10.1	Ավարտված	հատ	18
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	18
10.3	Կասեցված	հատ	18
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլրդ դրամ	2.317